

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԴԻԼԻՉԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



ՁԵԿՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Դիլիջանի Համայնքապետարանի 2022թ. հունվարի 1-ից 2023թ. հունվարի 1 ընթացքում կատարված աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին

Մարտի 14, 2023

Դիլիջան

Բովանդակություն

Նախաբան.....	3
Աշխատակազմ.....	4
Դիլիջանի համայնքապետարանի մամուլ.....	6
Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժին.....	6
Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին.....	7
Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ.....	10
«Դիլիջանի Ղազարոս Աղայանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ.....	11
«Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ.....	12
«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ.....	13
«Դիլիջանի երկրագիտական թանգարան–պատկերասրահ» ՀՈԱԿ.....	13
«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ.....	14
«Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ.....	15
Նախադպրոցական ուսումնական հաստատություններ.....	17
«Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ.....	18
«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ.....	19
«Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ.....	19
Դիլիջան համայնքի գյուղական բնակավայրեր.....	19
Թեղուտ գյուղական բնակավայր.....	19
Հաղարծին գյուղական բնակավայր.....	20
Գոշ գյուղական բնակավայր.....	20
Խաչարձան գյուղական բնակավայր.....	21
Աղավնավանք գյուղական բնակավայր.....	21
Հովք գյուղական բնակավայր.....	22
Հավելված 1.....	23

Նախարան

Հայաստանի Հանրապետության Դիլիջան համայնքը հանգստավայրային և առողջարանային բնակավայր է. գտնվում է Տավուշի մարզում՝ մարզկենտրոն Իջևանից 36 կմ հարավ-արևմուտք: Քաղաքը գտնվում է Աղստև գետի ափին՝ ծովի մակերևույթից 1100-1510մ բարձրության վրա: Խոշորացված համայնք է և ընդգրկում է հետևյալ գյուղական բնակավայրերը. Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք:

Դիլիջանը Հայաստանի ամենադինամիկ զարգացող զբոսաշրջային համայնքներից է: Այստեղ են գտնվում Հայաստանի կարևոր կենտրոններից մի քանիսը. ՀՀ Կենտրոնական բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, Դիլիջանի միջազգային դպրոցը, Դիլիջանի կենտրոնական դպրոցը:

Դիլիջանը որպես համայնք խոշորացվել է 2016 թվականին, որից հետո ձևավորվել է Դիլիջան համայնքը՝ 6 գյուղական բնակավայրերով. Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Հովք:

Դիլիջանի համայնքապետարանի ենթակայության ներքո են գործում շուրջ 17 համայնքային կազմակերպություններ:

Սույն զեկույցում կներկայացնենք 2022թ. հունվարի 1-ից 2023թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում (այսուհետ՝ 2022-2023թթ.) Դիլիջան համայնքում կատարված աշխատանքների ընթացքը և վերջնարդյունքը:

Աշխատակազմ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքի ղեկավարի մոտ ընդունելության է գրանցվել 1140 քաղաքացի: Համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 190 կարգադրություն, կայացվել՝ 995 որոշում: Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 121 հրաման:

Նշված ժամանակահատվածում աշխատակազմի աշխատակիցների կողմից պատրաստվել է 2471 ելից գրություն: Մուտքագրվել է 4839 թղթակցություն՝ որից գրություն՝ 3014, դիմում գանգատներ և առաջարկություններ՝ 1825:

2022 թվականին տրվել է 4844 հանձնարարական, որից կատարվել է 4348, իսկ 496-ը (մոտ 10 %-ը) չի կատարվել տարբեր օբյեկտիվ պատճառներով: Տրամադրվել է 2583 տեղեկանք:

2022 թվականի ընթացքում գումարվել է 14 ավագանու նիստ, որի արդյունքում կայացվել է 276 ավագանու որոշում:

Հայ Փոստի միջոցով ուղարկվել են 220 նամակ-գրություններ: Քննվել է 6 վարչական վարույթ, որի արդյունքում գանձվել է 2 մլն դրամ տուգանք:

Հայցադիմումների պատասխաններ են ուղարկվել դատարաններ, համապատասխան գործերով դատական նիստերին ապահովվել է համայնքապետարանի համապատասխան բաժնի աշխատակցի մասնակցությունը: Քննարկվել են բնակիչների դիմումները, անհրաժեշտության դեպքում կազմակերպվել են տնայցեր, տրվել պատասխաններ: Կազմվել են Դիլիջան համայնքի տարբեր ոլորտներին վերաբերող հաշվետվություններ և ներկայացվել համապատասխան գերատեսչություններին:

Դիլիջանի համայնքապետարանի սոցիալական աշխատանք իրականացնող աշխատակիցներն ընդունել են 374 դիմում, մասնակցել 26 դատական նիստերի, ստացել խնամակալություն նշանակելու համար 13 դիմում: Գույքի օտարման համար հաստատվել է 3 դիմում, հաշվառվել 7 դեպք, հասարակական դատիարակ նշանակվել 2 աշակերտի համար, կատարել 98 տնայց, որի հիման վրա կազմվել է 17 սոցիալական դեպք: Մեկ տարվա ընթացքում սոցիալական աշխատակիցների կողմից գրվել է 526 եզրակացություն, ինչպես նաև 20 ակտ: Գումարվել է Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 14 նիստ: 3 անապահով ընտանիք ստացել է անհատական սննդի օգնության փաթեթ, 202 նորածին երեխաների մայրիկներ ստացել են համայնքապետարանի կողմից աջակցություն (ընդհանուր 6 մլն 520 հազար դրամ):

Սոցիալական աշխատակիցները մեկ տարվա ընթացքում մասնակցել են տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված 12 վերապատրաստման դասընթացի:

Համագործակցելով բարեգործական կազմակերպությունների հետ՝ Դիլիջան համայնքի անապահով և ԱՀ-ից տեղահանված ընտանիքները ստացել են տարբեր օգնություններ: Համագործակցելով «Վորլդ Վիժըն» կազմակերպության հետ, «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» (CLASS) ծրագրի շրջանակներում Դիլիջան համայնքի 7

շահառուներ ստացել են մասնագիտական հմտություններ, ապա անհրաժեշտ գործիքներ և պարագաներ՝ իրենց բիզնեսը սկսելու և եկամուտ ապահովելու համար:

Համագործակցելով Արցախի Տեղեկատվական շտաբի հետ՝ սոցիալական աշխատակիցները հունիսի մեկի և ամանորի միջոցառումներ են իրականացրել Արցախից տեղահանված երեխաների համար:

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Դիլիջանի սպասարկման կենտրոնում 2022-2023 թվականի ընթացքում կազմակերպվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման և դրանից բխող այլ գործառնությունների իրականացման համար դիմումների լրացում, կից ներկայացվող փաստաթղթերի ընդունումը, դրանց մուտքագրումն էլեկտրոնային կառավարման համակարգ և գործակալության կողմից դիմումի քննարկման արդյունքում ձևավորված փաստաթղթի տրամադրում:

Ապահովվել է խորհրդատվություն դիմողի առաջադրած հարցի կապակցությամբ, ինչպես նաև պահանջվող գործառնությունների իրականացման հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ:

Դիլիջանի ՔԿԱԳ սպասարկման կենտրոնում կատարվել են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների դիմումների ընդունում:

- Ծննդյան – 284
- Ամուսնության – 115
- Ամուսնալուծության – 20
- Հայրության որոշման – 81
- Մահվան – 315
- ՔԿԱԳ գրանցումներում ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ կատարելու – 77
- Քաղաքացիական կացության ակտի վերականգնման – 7
- Անվան, ազգանվան, հայրանվան փոխման - 2
- ՔԿԱԳ վկայականների կրկնօրինակների տրամադրման – 161
- Ակտային գրանցումների առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքների տրամադրման – 175

Կատարվել է ընդամենը 1275 փաստաթղթաշրջանառություն: Աշխատանք է իրականացվել արխիվի հետ՝ հարցումների, տեղեկանքների, կրկնօրինակումների, ուղղման, փոխման, վերականգնման դիմումների հետ առնչվող նախկին ակտային գրանցումների որոնում արխիվից և մուտքագրումը էլեկտրոնային կառավարման համակարգ: Ինչպես նաև ՔԿԱԳ մարմիններին, և օրենքով նախատեսված իրավասու այլ մարմիններին հարցումներով տրամադրվել են տեղեկություններ քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ և օրենքով սահմանված դեպքերում՝ ակտերի գրանցման պատճեններ՝ թվով 2131 փաստաթուղթ:

2022-2023 ժամանակահատվածում գանձվել է 1 մլն 460 հազար դրամ պետական տուրք՝ տեղական բյուջեի հաշվին:

Դիլիջանի համայնքապետարանի մամուլ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքերն են համարվել «Դիլիջանի համայնքապետարան» համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (www.dilijancity.am) և «Դիլիջանի համայնքապետարան» ֆեյսբուքյան էջը (<https://www.facebook.com/MunicipalityOfDilijan>): Պաշտոնական էլեկտրոնային հասցեներն են dilijan@mta.gov.am և dilijan1@yahoo.com: Յուրաքանչյուր ամսվա առաջին և տասնհինգերորդ օրերին կատարվել է Backups աշխատանք՝ համակարգի աշխատանքի անվտանգության նպատակով պահպանվել է ՀԿՏՀ համակարգի պատճենը արտաքին կրիչ սարքի վրա: Ապահովվել է էլից գրությունների առաքումը ՀԿՏՀ տարբերակով:

Հաշվետու տարվա ընթացքում էապես փոխվել են պաշտոնական կայքէջերում դրվող նյութերի որակը. օգտագործվել են պրոֆեսիոնալ լուսանկարներ, հղումներ, թեգեր, սիմվոլներ: Իրազեկման բարձրացման նպատակով հաճախ օգտագործվել են այլ հարթակներ ևս:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆեյսբուքյան էջի հետևորդների թիվը եղել է 6028, որից 1051-ը էջին միացել է հաշվետու տարվա ընթացքում (Տե՛ս Հավելված 1): Ապահովվել է 278.791 ծածկույթ (դիտումներ), ինչը 52%-ով ավելին է, քանի 2021 թվականի ցուցանիշը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ էջերով հետաքրքրված է կանանց 61.60%-ը, տղամարդկանց՝ 38.40%-ը: Հետևորդների ճնշող մեծամասնությունը Տավուշի մարզից են, ապա Երևանից, Լոռու մարզից: Էջը հավանել կամ տարբեր մեկնաբանություններ են թողել 94227 անգամ, տարբեր հրապարակումներով կիսվել 5402 անգամ:

Մեկ տարվա ընթացքում Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնական կայքէջերում լուսաբանվել են համայնքում տեղի ունեցող միջոցառումները, համայնքապետարանի կողմից արվող աշխատանքները, սուբվենցիոն ծրագրերը: Պատրաստվել են մի քանի հոլովակներ՝ համայնքի մասին պատմող, հաշվետու և ամփոփիչ:

Համագործակցություն է եղել Հայաստանի Հանրային հեռուստատեսության, Տավուշ Հեռուստաընկերության և մի շարք այլ լրատվական կայքերի հետ:

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժին

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժինն իրականացրել է մեծաթիվ աշխատանքներ:

Տարեակզբին մեկնարկել են ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի օժանդակությամբ իրականացվող՝ Դիլիջան համայնքի թվով 11 բազմաբնակարան բնակելի շենքերի վերանորոգման և էներգաարդյունավետ արդիականացման

աշխատանքները: Եղանակային անբարենպաստ իրադրությամբ պայմանավորված աշխատանքների մի մասը տեղափոխվել է 2023 թվական:

ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի օժանդակությամբ հիմնանորոգվել է Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 37/2 հասցեից մինչև Մյասնիկյան 117/4 ճանապարհահատվածը. եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով ասֆալտի երկրորդ շերտի և մայթերի թերությունների վերացման աշխատանքները կվերսկսվեն 2023 թվականին:

ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի օժանդակությամբ հիմնանորոգվել է Դիլիջան քաղաքի Կամարինի առաջին հասցեից Օրջոնիկիձե 57 – Կամարինի 37 հասցեի ճանապարհահատվածը:

ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի օժանդակությամբ հիմնանորոգվում է «Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի տանիքը և շենքը:

ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի օժանդակությամբ հիմնանորոգվում է «Հովհ. Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքը:

2022 թվականի ընթացքում իրականացվել են Դիլիջան համայնքի ներհամայնքային նշանակության ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ: Դիլիջան քաղաքի՝ Մշակույթի պալատի շենքին հարակից տարածքում Դիլիջանի համայնքապետարանի, Շվեյցարիայի զարգացման գործակալության, Գերմանիայի Դաշնության տնտեսական զարգացման և համագործակցության նախարարության ֆինանսավորմամբ կառուցվել են գյուղատնտեսական ապրանքների վաճառքի համար նախատեսված 5 տաղավարներ:

Հաշվետու տարվա ընթացքում Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժինը Դիլիջան համայնքի վարչական տարածքում տրամադրել է թվով 195 նախագծման թույլտվություն/ճարտարապետահատակագծային առաջադրանք, թվով 183 շինարարության թույլտվություն, թվով 22 շահագործման թույլտվություն (ավարտական ակտ), թվով 8 քանդման թույլտվություն: Ընթացք է տրվել բազմաթիվ քաղաքացիների բանավոր և գրավոր դիմումներին. կատարվել է քաղաքացիների ամենօրյա ընդունելություն:

Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին

Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. 2022թ. տարեկան ճշտված բյուջեն կազմել է ընդամենը 2.034.016.700 ՀՀ դրամ, որից վարչական մասը՝ 1117054500 ՀՀ դրամ, ֆոնդային մասը՝ 916.962.200 ՀՀ դրամ.

Բյուջեի եկամուտների կատարողականը տարեվերջի դրությամբ կազմել է՝

ա) Ընդամենը բյուջե՝ 2.332.219.100 ՀՀ դրամ, որը կազմում է 114.66%,

բ) Վարչական բյուջե՝ 1.089.982.800 ՀՀ դրամ, որը կազմում է 97.58%,

գ) Սեփական եկամուտներ՝ 403.588.600 ՀՀ դրամ կամ 93.08%:

2. Անշարժ գույքի հարկի գծով սպասարկվել է թվով 10.754 ֆիզիկական անձ և 167 իրավաբանական անձ:

3. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով սպասարկվել է 7.394 ֆիզիկական անձ և 58 իրավաբանական անձ:

4. Տրամադրվել է մոտ 9000 հատ զրոյական տեղեկանք՝ տարբեր գործարքներ իրականացնելու համար /սվիտսավություն, առ ու վաճառք, անվանափոխություն և այլն/:

5. Ուղարկվել է թվով 253 հատ ծանուցագիր՝ նախորդ տարիների հարկային պարտավորությունների կատարման վերաբերյալ, որի արդյունքում հավաքագրվել է 3.021.579 ՀՀ դրամ:

6. Թվով 126 կազմակերպությունների տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություններ:

7. Թվով 32 կազմակերպությունների տրվել է հանրային սննդի կազմակերպման թույլտվություններ:

8. Թվով 5 կազմակերպությունների տրվել է հեղուկ վառելիքի, սեղմված բնական գազերի մանրածախ վաճառքի թույլտվություններ:

9. Թվով 7 կազմակերպությունների տրվել է թույլտվություն ժամը 24.00-ից հետո առևտրի, հանրային սննդի կազմակերպման համար:

10. Թվով 8 կազմակերպությունների տրվել է բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություններ:

11. Սոցիալապես անապահով 362 ընտանիքի տրամադրվել է դրամական օգնություն՝ 10.565.000 ՀՀ դրամ:

12. Նորածին երեխաների թվով 202 ընտանիքի տրամադրվել է դրամական աջակցություն՝ 6.520.000 ՀՀ դրամ:

13. Դիլիջան համայնքից գորակոչված զինծառայողներին տրվել է նվերներ /հիգիենիկ պարագաներ/, որի արժեքը կազմել է 298.000 ՀՀ դրամ

14. Կազմվել և ներկայացվել է ամսեկան, եռամսյակային և տարեկան վիճակագրական հաշվետվություններ:

15. Յուրաքանչյուր ամիս կազմվել և ՀՀ Տավուշի մարզպետարան է ներկայացվել բյուջեի եկամուտների, ծախսերի, աղբահանության, ՀՈԱԿ-ի, աշխատավարձերի և այլ հաշվետվություններ:

16. ՀՄ և e-Invoicing ծրագրերով դուրս է գրվել 2.355 հատ հաշվարկային փաստաթղթեր, որը կազմում է 60.801.767.5 ՀՀ դրամ:

17. e-Invoicing ծրագրով ընդունվել է 238 հատ հաշվարկային փաստաթղթեր, որը կազմում է 112.805.080.4 ՀՀ դրամ:

18. e-Invoicing ծրագրով ընդունվել է 436 հարկային հաշիվներ, որը կազմում է 572.383.631.5 ՀՀ դրամ:

19. Client Treasury ծրագրով իրականացվել 24.248 հատ ընդհանուր գործարքներ:

20. Կազմվել և ավագանու քննարկմանն են ներկայացվել մոտ 60 հատ ավագանու որոշման նախագծեր:

21. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել 2022-2027 թթ. Դիլիջան համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը:

22. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել 2022 թվականի ՏԱՊ-ը:

23. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի 2023-2025 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի փաթեթը:

24. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել 2022 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

25. Իրականացվել են 11 բազմաբնակարան բնակելի շենքերի էներգաարդյունավետ արդիականացում և վերականգնում ծրագիրը, որից 6 ԲԲՇ-երի շինարարական աշխատանքներն ավարտել են, իսկ մյուս 5 շենքերի շինարարական աշխատանքները տեղափոխվել են 2023թ.:

26. Կառուցվել են թվով 5 հատ տաղավարներ՝ գյուղատնտեսական մթերքների վաճառքի համար, որի ընդհանուր արժեքը կազմում է 8.585.146 ՀՀ դրամ:

27. Աղավնավանք բնակավայրում կառուցվել է մոբայլ մանկապարտեզ, որի ընդհանուր արժեքը կազմում է 7.924.849 ՀՀ դրամ:

28. Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ, Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ, Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ, Դիլիջանի երկրագիտական թանգարան, Դիլիջանի մարզահամալիր, Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց, Հաղարծնի մանկապարտեզ և Թեղուտի գյուղապետարան /Մշակույթի տուն, փողոցների լուսավորություն/ տեղադրվել են արևային ՖՎ կայաններ:

29. 2022թ. ընթացքում ներկայացվել է թվով 4 սուբվենցիոն ծրագիր, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության կողմից և կազմակերպվել է նշված ծրագրերի գնման ընթացակարգերը՝ համապատասխան Գնումների մասին ՀՀ օրենքի: Նշված ծրագրերի մեկնարկը տրվել է 2022թ.-ին և կապված եղանակային պայմաններից բոլոր 4 սուբվենցիոն ծրագրերը մնացել են անավարտ և տեղափոխվել են 2023թ.: Ստորև ներկայացվում է իրականացվող ծրագրերը՝

- Դիլիջան համայնքի «Հովհ. Շարամբեյանի անվ. գեղարվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում – ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 230.290.021 ՀՀ դրամ,
- Դիլիջան համայնքի Մյասնիկյան 37/2 հասցեից մինչև Մյասնիկյան 117/4 ճանապարհահատվածի հիմնանորոգում – ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 691.912.184 ՀՀ դրամ
- Դիլիջան համայնքի Կամարինի 1 հասցեից Օրջոնիկիձե 57-Կամարինի 37 հասցեի ճանապարհահատվածի վերանորոգում – ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 182.947.568 ՀՀ դրամ
- «Դիլիջան համայնքի Մյասնիկյան 52 հասցեում գտնվող մշակույթի պալատ» շենքի վերանորոգում - ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 271.219.266 ՀՀ դրամ:

30. 2022 թ. ընթացքում կազմվել են 2023թ.-ի սուբվենցիոն ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը և նախնական հայտերի հետ ներկայացվել ՀՀ Տավուշի մարզպետարան: Ներկայացված են հետևյալ ծրագրերը՝

- «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 117/4 հասցեից մինչև Գայի 90 հասցեն ընկած հատվածի ասֆալտապատումով հիմնանորոգում» – 549.170.380 ՀՀ դրամ,
- «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի 256 հասցեից մինչև Այգեստան 1/1 հասցեն ընկած հատվածի ասֆալտապատումով հիմնանորոգում» - 172.628.230 ՀՀ դրամ,
- «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում և բնակավայրերում քսանչորս կանգառների կառուցում» - 56.448.500 ՀՀ դրամ,
- «Դիլիջան համայնքում տրանսպորտային երթուղիները սպասարկելու համար 2 հատ ավտոբուսների ձեռքբերում» - 120.400.000 ՀՀ դրամ,
- «Դիլիջան համայնքում կոմունալ տնտեսության սպասարկման համար 1 հատ աղբատար մեքենայի ձեռքբերում» - 79.900.000 ՀՀ դրամ,

- «Դիլիջան համայնքի Հաղարծին բնակավայրի 2-րդ, 7-րդ, 10-րդ փողոցների տուֆապատման աշխատանքներ» - 92.349.040 ՀՀ դրամ,
 - «Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի Մ.Գոշի փողոցի տուֆապատման աշխատանքներ» - 76.313.448 ՀՀ դրամ
 - «Դիլիջան համայնքի Խաչարձան բնակավայրի 2-րդ, 3-րդ փողոցների տուֆապատման աշխատանքներ» - 85.999.715 ՀՀ դրամ,
 - «Դիլիջան համայնքի Հովք բնակավայրի 1-ին փողոցի տուֆապատման աշխատանքներ» - 62.369.438 ՀՀ դրամ
 - «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 6 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում» (Մյասնիկյան 76, 78, Գետափնյա 76, Շահումյան 12, Շամախյան 1Ա, 1Բ փողոցներում) – 114.352.040 ՀՀ դրամ
 - «Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրում ջրագծի կառուցում» - 368.446.166 ՀՀ դրամ,
 - «Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրում ջրագծի կառուցում» - 221.313.018 ՀՀ դրամ:
31. Պատվիրվել են Հաղարծնի 7-րդ փողոցի կոյուղագծի կառուցման և Դիլիջանի համայնքապետարանի շենքի առաջին հարկի վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթները:
32. Կազմվել և ավագանու հաստատմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի 2023թ. տարեկան բյուջեի նախագիծը:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում տեղի ունեցել մի շարք միջոցառումներ:

Ապրիլի 7-ին Դիլիջանի Մշակույթի տան դահլիճում ցուցադրվել է «Էլ-Մար» կինոստուդիայի անվան թատրոնի «Փնտրվում է փեսացու» 1 գործողությամբ երաժշտական կոմեդիան: Ապրիլի 15-ին նույն դահլիճում ցուցադրվել է «Գարուն ա» սիրո և պատերազմի մասին պատմող ֆիլմը:

2022 թվականին Հայաստան-Ֆրանսիա դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակն էր, որի շրջանակներում Դիլիջանի ԳՄՀ կենտրոնում կազմակերպվել է հայ-ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակին նվիրված միջոցառում, և ցուցադրվել է «Երբ որ քամին հանդարտվի» հայ-ֆրանսիական համատեղ ֆիլմը:

Մայիսի 18-ին ցուցադրվել է Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմը՝ մեկ գործողությամբ:

Դիլիջանի համայնքապետարանի նախաձեռնությամբ և աջակցությամբ համայնքում տեղի են ունեցել մի շարք փառատոներ. հատկանշական է մայիսի 28-ին «Մինորա» մշակութային պրոդյուսերական կենտրոնի կողմից կազմակերպված «Մարգարիտ մշակույթ» փառատոնը, որն անց է կացվել Հաղարծնի երաժշտական դպրոցի դահլիճում:

Մայիսի 26-28-ը Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի աշակերտները մասնակցել են Բելառուսի Հանրապետության Կլիմովիչ քաղաքում անցկացվող «Ոսկե մեղու» մանկական ստեղծագործության 20-րդ միջազգային փառատոնին: Ջբաղեցրել են երրորդ հորիզոնականը:

Հունիսի 12-ին Դիլիջանի քաղաքային այգում տեղի է ունեցել «Արվեստի կամուրջ» ամենամյա փառատոնը, հուլիսի 27-ին՝ «Դիլիջանյան ամառ-2022» փառատոնը, որը կազմակերպվել էր «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից:

Սեպտեմբերի 3-ին անցկացվել է «Արհեստների և արվեստների» միջազգային հոբելյանական ամենամյա փառատոնը:

Հաշվետու տարվա ընթացքում խաղահրապարակներ են տեղադրվել «Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ», «Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում և Հովք գյուղական բնակավայրի մանկապարտեզում:

Աղավնավանք գյուղական բնակավայրում հիմնվել է առաջին մոդուլային մանկապարտեզ:

Կրթական և մշակութային միջոցառումներին զուգահեռ՝ իրականացվել են նաև «ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային մրցաշար, որից հետո «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ում բացվել է սեղանի թենիսի խմբակ: Տավուշի մարզպետարանի հետ համատեղ իրականացվել է «Սպորտլանդիա» մարզական միջոցառումը՝ նախատեսված 1-3-րդ դասարանների աշակերտների համար, ապա 4-6-րդ դասարանների աշակերտների համար: Անց է կացվել «Սպարտակիադա» ֆուտզալի մարզային առաջնությունը, որին մասնակցել են 7-12-րդ դասարանների աշակերտները:

Ապրիլի 22-ին Պարզ լիճ տանող ճանապարհին տեղի ունեցավ «ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի եզրափակիչ փուլը:

Տարեվերջին տեղի է ունեցել Ամանորյա տոնական միջոցառում:

«Դիլիջանի Ղազարոս Աղայանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Ղ. Աղայանի անվան կենտրոնական գրադարանն ունեցել է 4809 ընթերցող, ինչը ավելի է 2021 թվականի ցուցանիշից 847-ով կամ 20%-ով: Հաճախումների թիվը 58.609 է կամ 17%-ով ավելի 2021 թվականի ցուցանիշից: Տացքի թիվը 93.394 է, ընդհանուր ֆոնդերինը՝ 239.817, ստացված գրականությունը՝ 304:

2022 թվականին տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ, «Վահրամ Փափազյան – 135», անվանի դիլիջանցի Հենրիկ Խառատյանի մասին ներկայացնող միջոցառում, գիրք նվիրելու օրվան, մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ, ինչպես նաև «Զարգանդ Դարյան – 110-ամյակ», «Նար-Դոս – 155-ամյակ», «Տիգրան Չուխաջյան – 185-ամյակ», «Եղիշե Չարենց – 125-ամյակ», «Լեոնարդո դա Վինչի – 570-ամյակ», «Վարդգես Պետրոսյան – 90-ամյակ. »Ապրած և

չապրած տարիներ», «Վահագն Դավթան – 100-ամյակ. «Անկեզ մորենի», և «Անահիտ Մեկոյան – 100-ամյակ»:

Գեղեցիկ միջոցառմամբ գրադարանն ամփոփել է պոեզիայի համաշխարհային օրը, հաղթանակի և խաղաղության օրը, հայկական հուշարձանների պահպանության օրը, գիտելիքի և դպրության օրը, ազգային գրադարանային շաբաթը՝ «Գիրքը բալասան» խորագրով, գրադարանավարի օրը, Մուրբ Թարգմանչաց տոնը:

Կազմակերպվել են գրքի քննարկումներ, ինչպես օրինակ Անդրանիկ Պետրոսյանի «Հայթորքական հիմնախնդիրը», Գագիկ Վարդանյանի «Շիրակ աշխարհ» գրքերը և Վահան Տերյանի գրական ստեղծագործությունները:

2022 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը Դիլիջանի ԳԿՀ ՀՈԱԿ-ին են նվիրաբերել երկու համակարգիչ, իսկ նոյեմբերի 1-ից ՀՀ Կառավարության սուբվենցիոն ծրագրով և Դիլիջանի համայնքապետարանի աջակցությամբ գրադարանի շենքում սկսվել են հիմնանորոգման աշխատանքներ:

«Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ

2022 թվականի ընթացքում «Դիլիջան մարզահամալիր» ՀՈԱԿ-ը բարձր ցուցանիշներ է գրանցել տարբեր սպորտաձևերի մրցաշարերում:

Գարնանը տեղի է ունեցել հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնություն՝ նվիրված Սպարապետ Վ. Սարգսյանի ծննդյան տարելիցին: Մասնակցել են ավելի քան 320 ըմբիշ՝ Հայաստանի 10 համայնքներից:

Տեղի է ունեցել ֆուտբոլի հուշամրցաշար՝ ի հիշատակ 44-օրյա պատերազմի հերոսների: Մասնակցել է 60 սան՝ ՀՀ 6 համայնքներից՝ Դիլիջան, Թեղուտ, Իջևան, Օձուն, Ստեփանավան և Սևան:

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի երիտասարդական ՀՀ բաց առաջնությունում հաղթող ճանաչված Գագիկ Մարկոսյանի հիշատակին նվիրված հունահռոմեական ոճի ըմբշամարտի բաց առաջնությանը մասնակցել է ավելի քան 380 սան՝ Մարալիկից, Ստեփանավանից, Երևանից, Գյումրիից, Ջրվեժից, Էջմիածնից, Վարդենիսից և Դիլիջանից: Տեղի է ունեցել նաև բռնցքամարտի բաց առաջնություն՝ նվիրված Դիլիջան քաղաքի ծնողյան 478-ամյակին: Տեղի է ունեցել Հաղարծնի մշակույթի տանը, մասնակցել են 120 մարզիկներ՝ ներկայացնելով 10 թիմեր:

Նոյեմբերի 25-27-ը կրկին կայացել է հունահռոմեական ոճի ըմբշամարտի հուշամրցաշար՝ նվիրված Մ. Մելքոնյանի հիշատակին: Անցկացվել է Դիլիջան մարզահամալիրի մարզադահլիճում. մասնակցել է ավելի քան 218 սան:

2022 թվականին մարզահամալիրում բացվել է սեղանի թենիսի նոր խմբակ, կայացել են շախմատի մրցաշարեր:

Դիլիջանի մարզահամալիրը ոչ միայն կազմակերպել է տարաբնույթ մրցաշարեր, այլև հյուրընկալվել է այլ համայնքներում՝ որպես մասնակից-մրցող կողմ: Մրցաշարերին մասնակցել են Դիլիջան համայնքի՝ տարիքային տարբեր խմբերի ուսանող-մարզիկներ՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ:

«Դիլիջանի մշակույթի պալատ» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջանի մշակույթի պալատը ակտիվ ներգրավվածություն է ունեցել համայնքային միջոցառումների կազմակերպման գործում: Տեղիներին կապասարկմամբ ապահովել է գորակույցերի անցկացումը՝ տարբեր խորագրերով մշակութային և կրթական միջոցառումները:

Կազմակերպվել են կինոցուցադրություններ և թատերական ներկայացումներ («Փնտրվում է փեսացուն», «Գարուն ա», Հովհ. Թումանյանի «Լինում է, չի լինում», «Անուշ» թատերական ներկայացումները, «Վիշապ» «Ազոավն ասաց» մոնոդրամա):

Մշակույթի պալատը հյուրընկալել է նաև մի շարք փառատոներ, համերգներ: Պալատում կազմակերպված տարբեր միջոցառումներին հաճախել է ավելի քան 14.000 հանդիսատես:

«Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահ» ՀՈԱԿ

2022 թվականին թանգարան-պատկերասրահում ֆոնդերի թիվը կազմել է 5287, որից 7 գրաֆիկական աշխատանքներն ավելացել են տարվա ընթացքում: Տարվա ընթացքում այցելուների թիվը կազմել է 8245 մարդ: Տոմսերի վաճառքից գոյացած 14.194.100 դրամը մուտք է արվել համայնքային բյուջե, որն ըստ 2021 թվականի տվյալների ավելացել է 7.176.100 դրամով կամ ավելի քան 50 \$-ով:

Թանգարանում տեղադրվել են 10կտվ. հզորությամբ 22 հատ արևային վահանակներ, կատարվել է ցուցասրահների կոսմետիկ վերանորոգում և լուսարձակների փոփոխություն: Ավելացել են նկարների շրջանակներ, բաներային պաստառներ, ցուցանմուշների պիտակներ և լամինատ պատվանդաններ:

Մեկ տարվա ընթացքում տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ՝ Ժամանակակից արվեստի սրահի բացում (մշտական ցուցադրություն), Դիլիջան-Տվեր համատեղ միջոցառում, թանգարանների ցուցադրությունների ներկայացում, ինչպես նաև երկու քաղաքների միջև առցանց տեղեկատվության փոխանակում: Դիլիջանում տեղակայված գորամասի զինվորների և սպաների համար կազմակերպվել է անվճար այցելություն, տեղի է ունեցել թանգարան-պատկերասրահի գիտաշխատող Անժելա Լալայանի հեղինակած «Հին ու նոր Դիլիջան» ֆիլմի շնորհանդեսը: Ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան նվիրված իրականացվել է Ժան Բատիստ Գրյոզի «Աղջկա

դիմանկարը» ստեղծագործության ներկայացում-վերլուծություն, ինչպես նաև դիլիջանցի կին ստեղծագործողների ստեղծագործությունների ցուցահանդես՝ նվիրված կանանց միջազգային օրվան:

Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների և պատմական միջավայրերի պահպանության միջազգային օրը, կազմակերպվել է Դիլիջանի հուշարձանների մաքրման աշխատանքներ (Կառլեն Նուրիջանյանի «Հայուհի» արձանի, Գորկու և Կամո փողոցների վրա գտնվող Ս. Բաղդասարյանի հեղինակած հուշաղբյուրների, Ա. Վարդանյանի հեղինակած «Միմինո» արձանախմբի տարածքներում): Անցկացվել է լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված Մեծ եղեռնի զոհերին, ապա կազմակերպվել ֆիլմի ցուցադրություն՝ «Ձինվորն ու փիղը»՝ նվիրված հաղթանակի օրվան:

Թանգարանների միջազգային օրը տեղի է ունեցել «Թանգարանների ուժը» խորագրով միջոցառում՝ հազեցած գրաֆիկայի նոր աշխատանքներով. ելույթներով հանդես են եկել ՀՀ ԿԳՄՍ «Դիլիջանի արվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասնաճյուղ»-ի ուսանողներն ու աշակերտները, Հովհ. Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոցի «Դիլիջան» և Դիլիջանի համայնքային կենտրոնի «Նազանի» պարային համույթների սաները:

Հատկանշական է Հովհաննես Այվազովսկու՝ «Քրիստոս իր աշակերտներով» վերականգնված ստեղծագործության բացման արարողությունը, ինչպես նաև Հովհաննես Շարամբեյանի 96-ամյակին նվիրված ցուցահանդեսը: 2022 թվականի դեկտեմբերից թանգարան-պատկերասրահում են պահվում և ցուցադրվում նաև Գևորգ Սշեցու՝ «Իմ գործերում անկեղծությունն է» խորագրով աթոռ-կոլաժները:

«Դիլիջանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ

2022 թվականի ընթացքում Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցը գրանցել է բազմաթիվ հաջողություններ: Դպրոցի աշակերտները բազմիցս մասնակցել են տարբեր միջոցառումների, փառատոների: Հունվարին կայացել է Սուրբ Ծննդյան տոներին նվիրված միջոցառում, ապա կանանց միջազգային տոնին նվիրված համերգ: Դպրոցի 8 սան մասնակցել է «Արտ Սյուզիք» արվեստի 13-րդ միջազգային մրցույթ-փառատոնին: Ապրիլի 7-ին կայացել է միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին՝ «Մայրս պատկերն է մայր հայրենիքիս» խորագրով:

Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցից 3 աշակերտ ներկայացել են «Դեպի մեծ երազանք» համահայկական մրցույթ-խառատոնի մարզային փուլին, որը անց է կացվել Իջևան քաղաքում: Մի քանի շնորհալի սաներ մասնակցել են նաև «Փոքրիկ քայլ» մրցույթ-փառատոնին: Մայիսի 26-ին Բելառուսի Հանրապետությունում կայացած «Ոսկե մեղու» միջազգային փառատոնին մասնակցել են 10 սաներ և գրավել 3-րդ տեղը: Հունիսի 1-ին «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում կայացել է համերգ՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան: Հաշվետու ուսումնական տարվա ավարտին կայացել է հաշվետու համերգ: Ապա հոկտեմբերին Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի սաները մասնակցել են Երևանի Օպերայի և Բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի համերգին, այնուհետև «Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում հանդիպում են ունեցել հայտնի կոմպոզիտոր Ռոբերտ Ամիրխանյանի հետ: Նոյեմբերին «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում դպրոցի սաները

համերգային համատեղ ծրագրով հանդես են եկել Երևանի Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոցում: Մասնակցել են նաև «Դիլիջանի պետական քոլեջ»-ում կազմակերպված «Ոսկե աշուն» միջոցառմանը: Դեկտեմբերի 1-ից 20-ը այցելել են Դիլիջանի մանկապարտեզներ, դպրոցներ՝ ներկայացնելով տարեմուտի համերգային ծրագիր: Դեկտեմբերի ավարտին մասնակցել են «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում կազմակերպված գալա համերգին, ապա դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել Դիլիջանի մանկական երաժշտական դպրոցի տարեմուտի գալա համերգը:

2022 թվականը հազեցած է եղել ուսումնական փոխայցելություններով: Սովորող աշակերտների թիվը 146 է եղել: Երաժշտական դպրոցի գույքը համալրվել է 1 համակարգչով և 1 տպագրիչ սարքով: Ձեռք է բերվել «ՀԾ-ՀԱՇՎԱՊԱՀ 7» համակարգչային ծրագիրը, ինչպես նաև վերանորոգվել են դպրոցի դահլիճը, բակի ճաղավանդակները:

«Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հովհ. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցը զբաղվել է բազմաթիվ հաջողություններ, մասնակցել տեղական, հանրապետական և միջազգային բազմաթիվ մրցույթների, փառատոների: Տարեկան 34 աշակերտների՝ 32 ստեղծագործական աշխատանքներ մասնակցել են Չեխիայում կայացած ամենամյա «Լիդիցե» 50-րդ միջազգային նկարչական և դեկորատիվ – կիրառական արվեստի մրցույթ-փառատոնին: Փետրվարին գեղարվեստի դպրոցի 43 աշակերտներ առցանց ձևաչափով մասնակցել են Լոնդոնում կայացած „Unheard Voices of Conflict and Service Children”, որի արդյունքում մասնակից բոլոր աշակերտներն արժանացել են դիպլոմների: Մարտին մասնակցություն են ունեցել «Դիլիջան Ջիմ» մարզական ակումբի կողմից կազմակերպված «Դիլիջան Ջիմ Լոգոյի» մրցույթ-ցուցահանդեսին, որի արդյունքում Արա Մարտիրոսյանը, «Լավագույն լոգոյի արտահայտում նկարի միջոցով» անվանակարգում, արժանացել է 1-ին տեղ մրցանակի. Էլեն Ամիրանյանը, «Լավագույն նկարչական մոտեցում» անվանակարգում արժանացել է 2-րդ տեղի մրցանակի. Միլենա Աղաջանյանը, «Լավագույն գրաֆիկական լուծում» անվանակարգում արժանացել է 3-րդ տեղ մրցանակի: Մրցանակների և դրամական պարգևների են արժանացել նաև 2021-2022 ուս. տարվա լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները:

Ապրիլին «Վերդյաններ» Մշակույթի կենտրոնի կողմից կազմակերպված՝ պարի միջազգային օրվան նվիրված փառատոնին մասնակցություն են ունեցել նաև Դիլիջանի պարարվեստի բաժնի աշակերտները՝ արժանանալով դիպլոմների և մեդալների, իսկ դպրոցը՝ գավաթի և դիպլոմի: Մայիսին «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած «Մինորա» մշակութային կենտրոնի 20-ամյա հոբելյանական համերգ-փառատոնին մասնակցություն են ունեցել Դիլիջանի պարարվեստի բաժնի 3 տարբեր տարիքային խմբեր՝ արժանանալով դիպլոմների և մեդալների, իսկ դպրոցը՝ դիպլոմի և հուշանվերի:

Մայիսին Գյումրիում կայացած «Շիրակի էսթիվո-2022» հանրապետական պարային մրցույթ-փառատոնին մասնակցություն է ունեցել Դիլիջանի պարարվեստի բաժինը: Դիլիջանի

երկրագիտական թանգարան-պատկերասրահում պարարվեստի բաժնի աշակերտներն իրենց գեղեցիկ կատարումներով հանդես են եկել Թանգարանների միջազգային օրվան նվիրված միջոցառմանը:

Մայիսի 28-ին Հաղարծնի մշակույթի տան դահլիճում կայացել է «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից կազմակերպված՝ «Դիլիջանյան կոլորիտ» խորագրով պարի փառատոնը, որտեղ իրենց մասնակցությունն են ունեցել նաև Հաղարծնի մասնաճյուղի պարարվեստի բաժնի 3 տարբեր տարիքային խմբերը՝ արժանանալով պատվոգրերի: Դպրոցը նույնպես արժանացել է պատվոգրի և հուշանվերի: Մասնակցություն են ունեցել նաև ՀՀ Նկարիչների միության Տավուշի մասնաճյուղի կողմից Չվարթնոց օդանավակայանի ARTAM Gallery ցուցասրահում կայացած ցուցահանդեսին:

Գեղարվեստի դպրոցի պարարվեստ բաժնի 8-12 տարեկանների խումբը մասնակցել է Գյումրիում կայացած՝ «Շիրակի էսքիզներ-2022» հանրապետական պարային մրցույթ-փառատոնի գալահամերգին՝ «Թեմատիկ սյուժետային բեմադրություն» անվանակարգում զբաղեցնելով 3-րդ պատվավոր հորիզոնականը: Հունիսի 5-ին դպրոցի 17 աշակերտ մասնակցել է «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում կայացած «Շրջակա միջավայր առանց պլաստիկի» ցուցահանդես-մրցույթի մրցանակաբաշխության հանդիսավոր միջոցառմանն ու արժանացել պատվոգրերի և նվերների: Երևանում «Մոսկվայի տուն» ռուսական համայնքի կողմից կազմակերպված փառատոնին նույնպես մասնակցել են պարարվեստի բաժնի աշակերտները:

Հունիսի 30-ին «Մոսկվայի տուն» մշակութագործարարական կենտրոնում մասնակցել են «Յունիվերս Արտ» միջազգային մրցույթ-փառատոնի մրցանակաբաշխությանն ու գալահամերգին, որի արդյունքում գեղարվեստի դպրոցի 10 աշակերտ արժանացել են առաջին, երկրորդ և երրորդ կարգի դափնեկրի և մեկ մասնակցության վկայականի:

Հունիսի 25-ին Ենոքավանում կայացած «Հայ բույս 2022թ» ամենամյա փառատոնին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև գեղարվեստի դպրոցի պարարվեստի բաժինը՝ Հաղարծին, Թեղուտ և Դիլիջան բնակավայրերի պարային խմբերով: Նույն փառատոնին գեղարվեստի բաժնի աշակերտները ներկայացրել են գեղարվեստական տաղավարների և վարպետության դասեր:

Հունիսի 4-ին Դիլիջանի Մշակույթի պալատում կայացավ գեղարվեստի դպրոցի 2021-2022 ուսումնական տարվա երկու մասնագիտությունների հաշվետու միջոցառումը, որտեղ հանձնվեց նաև շրջանավարտների ավարտական վկայականները: 2022 թվականին դպրոցն ավարտել է 29 աշակերտ:

Հունիսի 18-ին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կայացած «Ամարաս» պարային համույթի տարեվերջյան մենահամերգին մասնակցություն ունեցան նաև Դիլիջանի պարարվեստի բաժնի թվով 28 աշակերտներ: Հունիսի 23-ին «Մինորա» մշակութային կենտրոնի կողմից Դիլիջանում կազմակերպված «Դիլիջանյան ամառ» երաժշտական պարի փառատոնին մասնակցել են նաև Հաղարծին և Թեղուտ բնակավայրերի պարի բաժնի աշակերտները՝ արժանանալով պատվոգրերի, իսկ դպրոցը՝ պատվոգրի և հուշանվերի:

Օգոստոսի 23-ին նկարչական բաժնի աշակերտները մասնակցել են ԱՊՀ երկրների շրջանակներում ամենամյա կազմակերպվող «Խաղաղության Մարտիկ-2022» և միջազգային մրցաշարերի մշակութային օրվան նվիրված ցուցահանդեսին, որտեղ բացի ցուցահանդեսային հարթակից հանդես եկան նաև գեղարվեստի բաժնի Հաղարծին բնակավայրի պարային խմբերը:

Իսպանիայում կայացած «Ո՛չ պատերազմին» առցանց մրցույթին մասնակցություն են ունեցել գեղարվեստի դպրոցի 10 աշակերտներ՝ իրենց ստեղծագործական աշխատանքներով, որի արդյունքում մասնակից բոլոր աշակերտներն արժանացել են դիպլոմների, իսկ Կարեն Ուլիխանյանն արժանացել է մրցանակի և դիպլոմի:

Հոկտեմբերի 9-ին գեղարվեստի դպրոցի պարարվեստի բաժնի 20 աշակերտներ հնարավորություն ստացան ներկա գտնվելու Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած պարի պետական անսամբլի մենահամերգին: Հոկտեմբերի 14-ին ՀՀ նկարիչների միությունում կայացավ «Արվեստն առանց սահմանների» միջազգային առցանց մրցույթի եզրափակիչ ցուցահանդեսի բացման արարողությունն ու մրցանակաբաշխությունը, որին ներկա գտնվեցին դպրոցի 9 սան և արձանագրեցին հետևյալ արդյունքները.

- Արծրուն Ամիրյան – 1-ին կարգի դիպլոմ / բատիկ աշխատանքով /
- Արծրուն Ամիրյան – 2-րդ կարգի դիպլոմ / գրաֆիկական աշխատանքով /
- Արծրուն Ամիրյան – դիպլոմ / կավագործությամբ /
- Տիգրան Գալստյան – 1-ին կարգի դիպլոմ / վինտաժ /
- Արամ Մարտիրոսյան – դիպլոմ / լինոփորագրություն /
- Մոնիկա Օրդինյանը, Անահիտ Մադաթեյանը, Նարե Ալավերդյանն ու Շուշան Գիժլարյանն արժանացել են մասնակցության դիպլոմների:

Դեկտեմբերի 5-ին դպրոցի կոմից գեղանկարչության բաժնի 9 աշակերտների ստեղծագործական աշխատանքներ ներկայացվեցին «Հայրենիք Հայաստան» թեմայով «Քույր դպրոցներ» ծրագրին: Արդյունքում Անգելինա Պապյանի և Անի Կոխլիկյանի աշխատանքներն ընտրվեցին՝ մասնակցելու հանրապետական եզրափակիչ ցուցահանդեսին: Դեկտեմբերի 23-ին Հաղարծին բնակավայրում անցկացվեց ամանորյա տոնական միջոցառում, որում ընդգրկված են դպրոցի բոլոր աշակերտները:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքի նախադպրոցական կրթական հաստատությունների թվաքանակը փոփոխության չի ենթարկվել:

«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 136 սան. աշխատողների քանակը 30 է: 2022 թվականին տեղադրվել է խաղահրապարակ:

«Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 103 սան. աշխատողների քանակը 31 է:

«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 98 սան. աշխատակիցները քանակը 30 է:

«Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 75 սան. աշխատողների քանակը 24 է:

«Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 17 սան. աշխատողների քանակը 11 է:

«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 30 սան. աշխատողների թիվը 17 է:

«Հաղարծնի մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 80 սան. աշխատակիցների քանակը 26 է: Հաղարծնի մանկապարտեզի մասնաճյուղերն են համարվել Հովքի և Խաչարձանի մոբայլ-շարժական մանկապարտեզները: Հովքի մանկապարտեզը տարեվերջին համալրվել է խաղահրապարակով:

«Թեղուտի մանկապարտեզ» ՀՈԱԿ են հաճախել 32 սան. աշխատակիցների քանակը 18 է:

Կառուցվել է մեկ մոբայլ մանկապարտեզ Աղավնավանքում:

Նախադպրոցական կրթական հաստատություններում կատարվել են համապատասխան ուսումնադաստիարակչական աշխատանքներ՝ ըստ սահմանված նախադպրոցական կրթական ծրագրի: Մանկապարտեզների աշխատանքում կարևոր դեր են խաղացել երեխաների ուրախ ժամանցի, խաղերի ապահովումը, թեմատիկ բովանդակությամբ միջոցառումների կազմակերպումը: Կատարվել են երեխաների խաղային գործունեության, վարվեցողության, բարեկիրթ վարքի դրսևորման, երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացման տարաբնույթ աշխատանքներ:

«Դիլիջան համայնքի տրանսպորտ և լուսավորություն» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում արտաքին լուսավորության ցանցում կատարվել են բազմաբնույթ աշխատանքներ: Նախկին լապտերների փոխարեն տեղադրվել են նոր գերժամանակակից էներգոխնայող 686 հատ LED տեսակի լուսատուներ Դիլիջանի համայնքի տարբեր հատվածներում: Ստորև ներկայացվում է տեղադրված լուսատուների հասցեները և քանակը.

- Շամախյան փողոց (ներառյալ բոլոր նրբանցքները) – 141 հատ լուսատու
- Կալինինի 4-րդ նրբանցք – 80 հատ լուսատու
- Կալինինի 2-րդ նրբանցք – 13 հատ լուսատու
- Սայաթ Նովա փողոցի 1-ին հատված – 71 հատ, 2-րդ հատված – 73 հատ լուսատու
- Շահումյան փողոց (ներառյալ բոլոր նրբանցքները) – 23 հատ լուսատու
- Ուսանողական փողոց (ներառյալ բոլոր նրբանցքները) – 65 հատ լուսատու
- Սյաննիկյան 55 փողոց – 5 հատ, գերեզմանատան դիմացի լանջ – 12 հատ լուսատու
- Դիլիջանի Օղակաձև հրապարակ – 88 հատ լուսատու
- Խաչարձան գյուղական բնակավայր – 65 հատ լուսատու
- Աղավնավանք գյուղական բնակավայր – 31 հատ լուսատու

Դիլիջանի հասարակական տրանսպորտի քանակն անփոփոխ է, միայն տեղի են ունեցել ժամային որոշակի փոփոխություններ:

«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում ՀՈԱԿ-ն իրականացրել է համայնքի աղբահանության, սանիտարահիգիենիկ մաքրման, ավելորդ և չորացած ճյուղերի հեռացման, ծառերի էտման, հենապատերի ու մայթերի վերանորոգման աշխատանքներ: Վերանորոգվել են մի շարք աղբամաններ, իսկ դրանցից մի քանիսը նաև ցանկապատվել են կենդանիների միջոցով աղբը չտարածելու և միջավայրը չաղտոտելու համար:

Հաշվետու տարվա ընթացքում վերանորոգվել են մի շարք խաղահրապարակներ, ավտոմոբիլային պարկը համալրվել է ժամանակակից մեկ միավոր աղբատար մեքենայով: Աղբատար մեքենան գնվել է «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ը: Ֆինանսավորվել է Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի հարմարվողականության հիմնադրամի կողմից:

Մեկ տարվա ընթացքում մաքրվել են հին և գործող աղբավայրերը, խճապատվել բնակավայրերի երկրորդային և երրորդային նշանակության ճանապարհները, մաքրվել են նաև գերեզմանատների տարածքը և ճանապարհը: Իրականացվել է ծառատունկ և առանձին հատվածներում կանաչապատում: Էտած ծառերից գոյացած փայտանյութը տրամադրվել է Դիլիջան համայնքում ապրող սոցիալապես անապահով ընտանիքներին՝ իրենց դիմումների համաձայն:

«Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում «Դիլիջանի բնակարանային տնտեսություն» ՀՈԱԿ-ն իրականացրել է 27 բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի մասնակի վերանորոգում, 6 բազմաբնակարան շենքերի ջրագծերի մասնակի վերանորոգում, 46 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:

Հիմնանորոգվել է հասարակական տրանսպորտի մեկ կանգառ, ինչպես նաև հիմովին փոխվել է «Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ջրագիծը, և նորոգվել տանիքը:

Դիլիջան համայնքի գյուղական բնակավայրեր

Թեղուտ գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Թեղուտ գյուղական բնակավայրում կատարվել են ջրագծի ներքին ցանցի

կապիտալ վերանորոգման աշխատանքներ, բարեկարգվել են ներհամայնքային գրեթե բոլոր ճանապարհները, իրականացվել են փողոցների սանիտարական մաքրման աշխատանքներ:

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակներում Թեղուտի մի քանի շահառու ընտանիքներ իրենց պատկանող տնամերձ հողամասերում իրականացրել են ծառատնկման աշխատանքներ. տնկվել են կիսաթուփ տիլլենիներ, ընկուզենու, խնձորենու և տանձենու տնկիներ: Ծրագիրն իրականացվել է «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի աջակցությամբ:

Բարերարներ Բաղայանների ընտանիքի կողմից տուֆապատվել է երրորդ փողոցից մինչև գերեզմանատուն ճանապարհը:

Հաղարծին գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հաղարծին գյուղական բնակավայրում պարբերաբար կատարվել են բնակավայրի հիմնական ջրամատակարարումն ապահովող մայր ջրագծերի և դրանց ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ: Ձմռան ամիսներին փողոցներում կատարվել են ձնամաքրման, աղով և ավազով գյուղամիջյան ճանապարհների մշակման աշխատանքներ: Լայնածավալ աշխատանք է կատարվել բնակավայրում առկա ջրատարեր-սելավատարերի, կիրճերի, ջրահեռացման համակարգերի մաքրման համար. «Խաչի յալ» կոչվող գերեզմանատանը տեղադրվել է սելավատար համակարգ:

2022 թվականի ընթացքում գյուղամիջյան երկրորդային և երրորդային ճանապարհները խճապատվել են, որոշ հատվածներում իրականացվել են հողահարթեցման աշխատանքներ: Բնակավայրի 10-րդ և 11-րդ փողոցներում կառուցվել է կոյուղատար. վերանորոգվել և ամրացվել են բնակավայրի գերեզմանատների դարպասները:

Գոշ գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Գոշ գյուղական բնակավայրում կառուցվել և վերանորոգվել է 100 գծ/մ երկարությամբ խմելու ջրի ջրագիծ: ՀՀ Կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրով հիմնանորոգվել է Գոշի միջհամայնքային ճանապարհը, իսկ Դիլիջանի համայնքապետարանի միջոցներով վերանորոգվել և բարեկարգվել են բնակավայրի երկրորդային և երրորդային նշանակության ճանապարհները:

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներին հարակից էկոհամակարգերի և համայնքների հարմարվողականության կարողությունների ամրապնդում» ծրագրի

շրջանակներում հիմնվել է 2,5 հա պտղատու այգի, կառուցվել ոռոգման համակարգ, այդ թվում երկու ջերմոց և մեկ չորանոց:

Խաչարձան գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Խաչարձան գյուղական բնակավայրում կառուցվել է 2,3 կմ երկարությամբ ոռոգման ջրի ցանց, գյուղամիջյան երկրորդային և երրորդային նշանակության ճանապարհները խճապատվել, փոսալցվել և հարթեցվել են: Բարեկարգվել են նաև դաշտամիջյան ճանապարհներ:

Խաչարձան բնակավայրում կառուցվել են 5 ջերմոցներ և 1 չորանոց: Կատարվել է բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կոսմետիկ վերնորոգում, ինչպես նաև խմելու ջրագծերի վթարված հատվածների վերականգնում:

Աղավնավանք գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Աղավնավանք գյուղական բնակավայրում կատարվել են գյուղամիջյան 2 կմ երկարությամբ ճանապարհի լուսավորության աշխատանքներ: Լայնեցվել, խճապատվել և բարեկարգվել են գյուղամիջյան երկրորդային և երրորդային նշանակության ճանապարհները:

«Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից Աղավնավանք գյուղի 22 շահառու ընտանիքներին տրվել են 1 տոննա տարողությամբ ջրի բաքեր, իսկ 1-16 տարեկան երեխաներին՝ նվերներ: Եվս 25 շահառու ընտանիք ստացել է սերմեր՝ սածիլներ մշակելու համար: 48 շահառու ընտանիքների տրամադրվել է 350 եվրոյին համարժեք ՀՀ դրամ՝ հողամասերի համար անհրաժեշտ պարագաներ գնելու նպատակով:

«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից կատարվել են դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, տեղադրվել են խմոցներ և շահառու ընտանիքներին տրամադրվել են բանջարաբուստանային մշակաբույսերի սածիլներ: 45 ընտանիք ստացել է մոշի և ազնվամորու տնկիներ: Պարարտացվել է 145 հա արոտավայր: 10 շահառուների տրամադրվել են դեղաբույսերի սերմեր՝ աճեցնելու համար:

«Հուլիսի Դուռ» կազմակերպության նախագահ Մարգիս Բոյադջյանի ֆինանսական օժանդակությամբ՝ հիմնանորոգվել է Աղավնավանքի ակումբի հատակը: Ամռան ամիսներին բնակավայրի երեխաների համար կազմակերպությունը նախաձեռնել և իրականացրել է ճամբար:

2022 թվականի ընթացքում Աղավնավանքում կառուցվել է մոդուլային նախադպրոցական ուսումնական հաստատություն: Համայնքի նախաձեռնությամբ՝ բնակավայրում մեկնարկել են գազատարերի վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում դպրոցը գազաֆիկացվել է. այժմ ընթանում են բնակելի տների գազաֆիկացման աշխատանքներ:

Կատարվել են վթարային ջրագծերի վերանորոգման աշխատանքներ. մեկ թաղամասում ամբողջական ջրագիծ է վերանորոգվել: Մայիս ամսից սկսած վերահսկողություն է սահմանվել խոտհարքերի, վարելահողերի պահպանության համար: Անապահով 8 ընտանիքի տրամադրվել է 3 խ/մ վառելափայտ, իսկ ևս 16 ընտանիք ստացել է սննդային օգնություն: 38 երեխա ստացել է տոնական նվերներ:

«Էյ-Թի-Փի» հիմնադրամի կողմից Աղավնավանքի բնակիչ Վահագն Բաղդասարյանը ստացել է 4000 ԱՄՆ դոլլար աջակցություն՝ իր այրված տան շինարարական աշխատանքների համար:

Հովք գյուղական բնակավայր

2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում Հովք գյուղական բնակավայրում կատարվել են խմելու ջրի ակունքի և մոտ 3 կմ երկարությամբ ջրատարների մաքրման աշխատանքներ: Բարերարների աջակցությամբ կառուցվել է Հովքի մանկապարտեզի նոր խաղահրապարակը, մանկապարտեզի ցանկապատը ներկվել և բարեկարգվել է:

2022 թվականի ընթացքում փոսալցվել և հարթեցվել են գյուղամիջյան երկրորդային և երրորդային նշանակության ճանապարհները:

Վարչական ղեկավարը մասնակցել է համայնքում տեղի ունեցած բազմաթիվ միջոցառումներին, ինչպես նաև հանդիպել բնակիչներին, նրանց բարձրաձայնած հարցերին տվել համապատասխան լուծումներ:

Բնակավայրերում քաղաքացիների հետ կնքվել են խոտհարքերի և արոտավայրերի, դրանցից գանձվող վճարների մասին պայմանագրեր: Մեկ տարվա ընթացքում կատարվել է ընտանի կենդանիների հաշվառում, ինչպես նաև համայնքային գույքի գույքագրում:

Վարչական ղեկավարի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ գյուղական բնակավայրի բնակիչների հետ՝ նրանց հարցերը լսելու և դրանց լուծումներ առաջարկելու համար:

Հավելված 1

Действия подписчиков

Ваши новые подписчики, чистая прибавка подписчиков и пользователи, отменившие подписку. Метрики являются приблизительными.

1 янв 2022 г. - 31 дек 2022 г.

1 051

Новые подписчики

1 507


Предыдущий период

128


Отменили подписку

193

Предыдущий период



Сводка

Страница	Реакции и отметки "Нравится",...	Отметки "Нравится" и реакции	Комментарии	Репосты	Клики по ссылкам	Новые подписчики	Отменившие подписку
 Դիվիզիոնի համայնքային կենտրոնի Գրասենյակի Կայքէջը Правительственная ...	94227	85105	3720	5402	1876	1051	128

Результаты

Оплаченный охват ⓘ


4 472 ↓ 54,5%

Охват Страницы Facebook ⓘ

278 791 ↑ 52%

Возраст и пол


- Мужчины 38.40%
- Женщины 61.60%



Результаты


Охват Страницы Facebook ⓘ

278 791 ↑ 52.2%



Посещения Страницы Facebook ⓘ

90 954 ↑ 169.2%



Новые отметки "Нравится" Страницы Facebook ⓘ

1 051 ↓ 20.5%

